

Home > Անդրադարձ

«Հայոց Գեղասպանութիւնը Գրականութեան Մէջ» (Յեղիակ՝ Ռուբինա Փիրումեան)

April 8, 2013 5:37 AM 0


Aztag Daily Archives

2011/03/04 –
2014/12/31

Search

Type something and Q

Follow Us


 1,0 Follow

 15,2 Like

 82 Follow

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

2012-ին, Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկին հովանաւորութեամբ, Երեւանի մէջ լոյս տեսաւ ամերիկահայ մտաւորական Ռուբինա Փիրումեանի «Հայոց



ցեղասպանութիւնը գրականութեան մէջ» խորագրեալ ստուար հատորը, որ գրուած է անգլերէնով եւ ամփոփուած՝ հայերէնի:

Սոյն գործը կը բաղկանայ 468 էջերու եւ կ'ընդգրկէ հետեւեալ բովանդակութիւնը, «Առաջին սերունդի կտակը», «Որբացած սերունդը», «Յիշատակներու դրսեւորման վերսկսումը», «Մատենագրութիւն», «Ցանկ սիւրբ», «Ծանօթագրութիւն» եւ «Հայերէն ամփոփում»:

Իր նախաբանին մէջ Ռուբինա Փիրումեան կ'ըսէ, թէ ինք նախասիրած է ուսումնասիրել Հայոց ցեղասպանութիւնը գրականութեան մէջ սիւրբ՝ տոքթորայի վկայական ձեռք ձգելու նպատակով: Ըստ հեղինակին, սոյն առաջադրանքը կը թելադրուի այն նկատումէն, թէ Հայոց ցեղասպանութիւնը յարմարագոյն

Նիւթն է, զոր որքան ուսումնասիրենք, նոյնքան կը ծանօթանանք հայոց պատմութեան վերջին հարիւրամեակի արիւնոտ իրադարձութեանց:

Այս յղացքով, հայ գրականութիւնը հայելին է, որ կը ցոլացնէ տարապայման եղերականութեամբ եւ ճշգրտութեամբ իր հայրենի հողերէն աքսորուած հայ ժողովուրդի աննախընթաց նահատակութիւնը:

Արդարեւ, Ռուբինա Փիրումեան կ'ըսէ, թէ հայ գրողները իրենց գրական այլազան երկերով արծազանգ հանդիսացան 1894-1896 եւ 1909 թուականներուն Կիլիկիոյ եւ Ատանայի մէջ տեղի ունեցած հայկական ջարդերուն: Այսպէս, ազգային այս տխուր եւ աղիտալի իրավիճակը հանրութեան առարկան դարձուցին իրենց չափածոյ եւ արձակ գործերով Սիամանթոն եւ Դանիել Վարուժանը, Չապել Եսայեանն ու Սուրեն Պարթեւեանը, Վահան Թէքեանն ու Միհրան Տամատեանը, Յովհաննէս Յովհաննէսեանն ու Աւետիս Ահարոնեանը: Արփիար Արփիարեանն ու տաղանդաւոր այլ գրողներ:

Իրողութիւն է, թէ 1909 թուի կիլիկեան ջարդերուն նկատմամբ Վարուժանն ու Սիամանթոն երգեցին հայ ժողովուրդին տառապանքը ո՛չ թէ արցունքով եւ հեծութեամբ, այլ՝ թուրքին ոճրապարտ արարքը դատապարտող վրէժխնդրութեամբ: Այս յղացքով, Վարուժանի «Ջարդը» (1895-1896) եւ «Հայիոյանք» եւ «Սիամանթոյի «Դիւցազնօրէն»-ը եւ «Հայորդիները» խորագրեալ քերթողական գործերը, կիլիկեան ջարդերուն մասին յօրինուած արուեստի հոգեգրաւ եւ սրտայոյզ իրագործումներ են:

Ռուբինա Փիրումեան կ'ըսէ, թէ յետ 1915 թուի առաջին սերունդի վերապրող գրողները կը բաժնուին երկու խումբերու:

Առաջին խումբին կը պատկանին անոնք, որոնք 1915 թուականէն առաջ գրական վարկ մը ապահոված են իրենց անձին, օրինակ՝ Արամ Անտոնեան (1875-1951), Սուրեն Պարթեւեան (1876-1921), Չապել Եսայեան (1878-1943), Վահան Թէքեան (1878-1945),

Յակոբ Օշական (1883-1948), Շահան Լաթալի (1884-1983) եւ Կոստան Չարեան (1885-1969):

Իսկ երկրորդ խումբի գրողները, որոնք կը կոչուին անապատի որբեր, գրել սկսած են 1915 թուականէն ետք, օրինակ՝ Զրաչ Չարդարեան (1892-1986), Բենիամին Նուրիկեան (1894-1987), Համաստեղ (1895-1966), Շաւարշ Նարդունի (1898-1968), Վահէ Հայկ (1898-1983), Կարօ Մեհեան (1898-1984), Արամ Հայկազ (1900-1986), Վազգէն Շուշանեան (1903-1941), Նիկողոս Սարաֆեան (1902-1972), Չարեհ Որբունի (1902-1980), Շահան Շահնուր (1903-1974), Անդրանիկ Անդրեասեան (1909-1996), Կարօ Փոլատեան (1911-1986), Անդրանիկ Ծառուկեան (1912-1989) եւ Մուշեղ Իշխան (1913-1990):

Ռուբինա Փիրումեան կ'ըսէ, թէ վերոյիշեալ երկու խումբերէն անկախ, կային նաեւ առաջին սերունդի պատկանող վերապրողներ, որոնք թէեւ տաղանդաւոր գրողներ չէին, սակայն կը գրէին պարզապէս իրենց կորուսեալ ծննդավայրի մասին քաղցր յիշատակներ փոխանցելու համար գալիք սերունդներու յիշողութեան:

Այն բոլոր գրողները, որոնք փրկուեցան 1915 թուի Եղեռնէն, բնակութիւն հաստատեցին սփիւռքի տարբեր գաղթօճախներու մէջ, ուր ձեռնարկեցին գրական բեղուն գործունեութեան:

Ռուբինա Փիրումեան հատորի տարբեր բաժիններով կ'անդրադառնայ վերոյիշեալ գրողներու գրական գործունեութեան, որոնք օտար երկիրներու տակ հարստացուցին հայ գրականութիւնը իրենց իւրայատուկ նախաձեռնութիւններով:

Օրինակ, Փիրումեան կը նկարագրէ, թէ ինչպէ՛ս Լեւոն Չաւէն Սիւրմէլեանի քերթուածները 1922-1923 տարիներուն դարձան ուշադրութեան առարկան Յակոբ Օշականի եւ Վահան Թէքեանի:

Կ'ըսէ, թէ Մուշեղ Իշխան մատղաշ տարիքին իր ծննդավայր Սիվրիիի սարէն տառապանքով եկաւ Դամասկոս եւ Պէյրութ, ուր

հետագային նկարագրեց իր դժբախտ մանկութիւնը «Մնաս բարով մանկութիւն» խորագրեալ հատորին մէջ:

Վազգէն Շուշանեան վաղ հասակին կորսնցնելով իր ծնողները՝ ամբողջ կեանքի ընթացքին ապրեցաւ իր ծննդավայրի յիշատակներով:

Արամ Հայկազ իր մանկութեան թանկագին տարիները անցուցած է Զիւրտիստանի լեռներու մէջ, թուրքերու եւ քիւրտերու հետ: Ա. Աշխարհամարտի աւարտին մեկնած է Ամերիկա, ուր գրած է «Չորս տարի Զիւրտիստանի լեռներուն մէջ» ինքնակենսագրական վէպը, ինչպէս նաեւ «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը», «Ցեղին ձայնը» եւ այլ գործեր:

Հեղինակը կ'ըսէ, թէ յիշեալ որբերու սերունդին կը պատկանին նաեւ՝ Անդրանիկ Ծառուկեան, Նիկողոս Սարաֆեան, Շաւարշ Նարդունի, Շահան Շահնուր եւ ուրիշներ, որոնք տառապած են՝ երագելով շարունակ իրենց հարազատ ծննդավայրը:

Եզրափակելով մեր մտածումները՝ կ'ուզենք հաստատել, թէ Ռուբինա Փիրումեանի «Հայոց ցեղասպանութիւնը գրականութեան մէջ» խորագրեալ ուսումնասիրութեան ընթերցումով օտարներ մօտէն կը ծանօթանան հայ գրականութեան զարգացման հոլովոյթին:

Նոյեմբեր 2012
Պէլրոլթ

Share this Article

Recommend 0 Like 0  Shares

 **CATEGORIES** Անդրադարձ

⌵